պաղովկացւոց և Մարաց և Պարսից և երկաքանչիւր Հայաստանի, և գերագոյն բարձունապետ, որ կաթողիկոսն անուանի.» (Զամչ. Գ. 53)։ Գրիգորիս կթղ. կը վախճանի 1166ին։ Աշակերտած է Շուղր Անապատի գիտնական Ստեփանոս Մանուկ վրդի. Կիրակոս պատմագիր կը գրէ Գրիգորիսի համար. «սկսաւ թարգմանութիւնս առնել աստուածային գրոց. և բազում գիրս ետ թարգմանել ի Հայ լեզու, զորս ինքեամբ, և զորս այլոց ձեռամբ (էջ 63)։ Կը կոչուի Փոքր Վկայասէր և ունի չարականներ և տաղեր, ինչպէս կը վկայէ Գրիգոր Տաթևացին։

ԳՐԻԳՈՐ ԿԹՂ. ՎԿԱՅԱՍԷՐ.— Որդի Գրիգոր Մագիստրոսի, աւագանի անունը Վահրամ. կաթողիկոսանալէ յառաջ կրօնաւոր դարձած էր։ 1066ին Խաչիկ Անեցի կթղ.էն վերջ (1058-1065) կ'ընտրուի կթղ. և իր ժամանակը կ'անցնէ ուղևորութեամբ։ Մատթէոս Ուռհայեցին կը գրէ Վկայասէրին համար. «Գնալ ի Հռոմ և շրջիլ ընդ ամենայն անապատն Եգիպտացւոց. գնաց ընակիլ ի լերինս ընդ միանձունս ճգնաւորացն Քրիստոսի և ստացաւ վարս խստակրօն և ամենայնի չորաճաշակս.» (էջ 229-230). Վարդան պատմիչն ալ կը գրէ «Անցեալ գնաց ի Կ. Պոլիս ի թարգմանութիւն» (էջ 102)։ Վկայասէրի կեանքին և գործերու մասին դիմել Հայ. Եկեղց. Պատմութեան. իսկ անոր Երուսաղէմի այցելութիւնը կատարուած է հետևեալ կերպով, Կ. Պոլսէն ուղղակի ճամբայ ելած էր Երուսաղէմ գալու. վանդի ուխտ ըրած էր «ուխտ է եղեալ, և անհնար է ինձ սակ.» (Կիր. 54). բայց հովը հակառակ ըլլալով՝ Վկայասէր փոխանակ Յոպպէ իջնելու. հասած է Աղեքսանդրիա. Եգիպտոսի մօտ Թեփայիի կրօնաւորաց այցելութենէն և այլ գործերէ վերջ, կ'այցելէ Երուսաղէմ 1099ին, ինչպէս կը վկայէ Ուռհայեցին. «էր յայնժամ յԵրուսաղէմ հայրապետն Հայոց տէր Վահրամ, և զօրքն այլազգեաց կամեցան սպանանել զնա, և Տէր փրկեաց զնա ի ձեռաց նոցա. (էջ 326). Նոյն վկայութիւնը կուտան նաև Սամուէլ Անեցի (էջ 120) և Վահրամ Սսեցի պատմիչները։ ԺԲ. դարու գրիչ մը Վարդան Հայկազն իր Տաղ գերեզմանական վասն փոխմանն երանելոյ եւ սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի Վկայասիրի ոտանաւորին մէջ, հետևեալ տողերը կը գրէ՝ անոր հետիոտն ուխտաւորութեան առթիւ.

« . . . Ապա ուխտիցն փափաքէր
Զաչխատութեան գործ համբուրէր.